<<Ֆարմ Կրեդիտ Արմենիա>> ՈՒՎԿ ԱԿ

Դիտորդ խորհրդի անդամների ընտրություններ

Առաջնորդվելով կորպորատիվ կառավարման սկզբունքներով և հիմք ընդունելով ‘‘Ֆարմ կրեդիտ Արմենիա’’ ՈՒՎԿ ԱԿ փայատերերի ընդհանուր ժողովի գումարման կանոնակարգի 7.2 կետը հայտարարում ենք, որ գալիք՝ 2026թ.-ին կայանալիք ‘‘Ֆարմ կրեդիտ Արմենիա’’ ՈՒՎԿ ԱԿ փայատերերի հերթական ընդհանուր ժողովի շրջանակներում տեղի են ունենալու հետևյալ տարածաշրջաններից Դիտորդ խորհրդի անդամի ընտրություններ.

Սյունիքի մարզ,

Վայոց Ձորի մարզ,

Արարատի մարզ,

Արմավիրի մարզ,

Տավուշի մարզ,

Համաձայն ‘‘Ֆարմ կրեդիտ Արմենիա’’ ՈՒՎԿ ԱԿ փայատերերի ընդհանուր ժողովի գումարման կանոնակարգի փայատերերը մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը կարող են ժողովի օրակարգում նոր հարցեր ընդգրկելու գրավոր առաջարկություններ ներկայացնել Խորհրդին և Խորհրդի անդամության թեկնածուներ առաջադրել անվանակարգային հանձնաժողովին՝ վերը թվարկված տարածաշրջանների համար: